

Հասմիկ Մ. Եսայան

ՀԱՅԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՖՐԵՋՆՈՅԻ ՇՐՋԱՆՈՒՄ (1880–1920–ԱԿԱՆ ԹԹ.)*

Բանալի բառեր – խտրականություն, բնիկապաշտություն, սահմանափակող համաձայնագրեր, ներգաղթի քաղաքականություն, բնիկներ, «անցանկալի» գաղթականներ, ցեղային պատկանելիություն, քաղաքացիություն:

Հայտնի է, որ ցանկացած քաղաքակիրթ հասարակությունում մարդկանց տնտեսական ինքնահաստատումով ու բարեկեցությամբ է պայմանավորված նրանց սոցիալական կարգավիճակի բարձրացումը: Այս օրինաչափությունը, սակայն, շատ հաճախ չի գործում ազգային փոքրամասնությունների համար:

Դրա պատճառները տարբեր են՝ կրոնական, քաղաքական, ազգային և լայն առումով՝ քաղաքակրթական: Հայ գաղթաշխարհի պատմությանը նույնպես բնորոշ է տվյալ երևույթը: Արևմուտքի երկրների նորագույն պատմության մեջ այն առավել ցայտուն կերպով արտահայտվեց ԱՄՆ-ում, մասնավորապես՝ Կալիֆոռնիա նահանգի Ֆրեզնոյի շրջանում (county):

Ամբողջ Միացյալ Նահանգներում հայերը միայն Ֆրեզնոյում են հանդիպել այդքան բացահայտ, ընդգծված և երկարատև անհանդուրժողական վերաբերմունքի, այլ կերպ ասած՝ ազգային խտրականության: Այնտեղ հաստատվելու առաջին իսկ տարիներից (1880-ական թթ.) նրանք տասնամյակներ շարունակ չեն ընդունվել, մերժվել են ու ճնշվել ամերիկյան պետական, հասարակական, կրոնական կազմակերպությունների և միությունների կողմից: Դեռևս 1900-ական թթ. սկզբին Ֆրեզնոյի առաջին հայկական շաբաթաթերթի խմբագիր Հայկակ Էկինյանի բնութագրմամբ հայ լինելը նախատինք էր, և «Օ, ոչ, նա հայ է» (“Oh, he is an Armenian...”) արգահատական բացականչությունը հաճախ էր հնչում տեղացիների կողմից¹:

Կարևոր է նկատել, որ Ֆրեզնոյում հայերի հանդեպ խտրականության հիմքում ընկած էր բնիկապաշտությունը (nativism)²: Դա Միացյալ Նահանգների անգլոսաքսոնական ժողովուրդների մեջ 19-րդ դարի վերջին

*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.11. 2015:

1 Տե՛ս «Քաղաքացի», Ֆրեզնո, 1902, N 14, էջ 109:

2 Ամերիկյան «Nativism» տերմինի «բնիկապաշտություն» թարգմանությունը Վ. Մատթեյոյանին է, որը ձեզգրիտ համարելով՝ օգտագործել ենք մեր հոդվածում:

տարածված ազդեցիկ շարժում էր, որը շոշափելի դրսևորումներ ունեցավ ազգային քաղաքականության ոլորտում: Ընդ որում՝ բնիկ (native) ասվածը ամենևին էլ չէր վերաբերում երկրի իրական բնիկներին՝ հնդկացիներին: Ընդհակառակը, սրանով ամերիկացիները հրաժարվում էին որպես բնիկ ճանաչել վերջիններին: Շարժման հիմնական նպատակն էր ամեն կերպ սահմանափակել «անցանկալի» ներգաղթողների մուտքը և նրանց քաղաքական, քաղաքացիական ու տնտեսական իրավունքները: «Ազգային բացառիկության այս ուրձացած դրսևորումին, - գրում է Վ. Մատթեոսյանը, - ուղեկից էին քաղաքացիության, էթնիկ պատկանելության, գաղթականության, դասակարգի ու խտրականության հարցերու քննարկումներ, ինչպես և օրենսդրական միջոցառումներ, հիմնուած՝ սպիտակ ցեղի տիրապետության խօսույթին (discourse) վրայ»³: Բնիկապաշտության ամենաէական դրսևորումը գաղթականների քաղաքացիության հարցն էր, իսկ արդեն 1921-1924 թթ.՝ ներգաղթի սահմանափակման օրենքների ընդունումը:

Սակայն նախ և առաջ արժե ներկայացնել ազգամիջյան հարաբերությունները Ֆրեզնոյում, որտեղ բացի երկրի կառավարության ընդունած օրենքներից՝ գործում էին նաև նահանգային օրենքներ՝ ուղղված «անցանկալի» գաղթականների, այդ թվում՝ հայերի դեմ:

Ազգային խտրականության առաջին բացահայտ դրսևորումը եղավ դեռևս 1894 թ., երբ Ֆրեզնոյի Առաջին ժողովական (ավետարանական) եկեղեցուց (First Congregational Church) վտարվեցին նրա հայ անդամները, որոնք զգալի ներդրում էին ունեցել եկեղեցու կառուցման գործում: Ընդդիմանալով ամերիկացի հավատակիցների այդ որոշմանը՝ նույն 1894 թ. Կենտրոնական և Հյուսիսային Կալիֆոռնիայի ժողովական եկեղեցիների ընդհանուր միությանն ուղղված խնդրագրում վերոհիշյալ հայերը իրենց բողոքն էին արտահայտել խտրականության վերաբերյալ, սակայն որևէ արդյունքի չէին հասել⁴:

Ֆրեզնոյում տեղացիների խտրական վերաբերմունքը հայերի հանդեպ պայմանավորված էր նաև տնտեսական գործոնով: ԱՄՆ-ում գաղթականների հարցերով զբաղվող գրասենյակի արձանագրություններից մեկի համաձայն՝ տեղացիները նախանձով էին լցված հայերի նկատմամբ: Վերջինները, որ Ֆրեզնոյում ազգային ամենամեծ խումբն էին և աչքի էին ընկնում տնտեսական աշխույժ գործունեությամբ, ձգտում էին ձեռք բերել շրջանի ամենալավ հողատարածքները: Դա մեծ անհանգստություն էր պատճառում ամերիկացիներին, քանի որ «այս օտարերկրյա նորեկները, որոնք ոչ երկրի լեզուն գիտեին, ոչ էլ նրա սովորույթները»⁵, արագորեն տիրանում էին հնաբնակներինը համարվող հողերին:

Տեղացիները փորձում էին ամեն կերպ կանխել այդ գործընթացը: Մինչև 1949 թ. Ֆրեզնոյում գործում էր այսպես կոչված սահմանափակող (re-

3 Մատթեոսյան Վ., Ամերիկեան հակագաղթականական հոսանքը և հայերը (1890-1914), «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» հայագիտական միջազգային II համաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., 2013, էջ 36:

4 Տե՛ս Kooshian G. B., Jr. The Armenian Immigrant Community of California: 1880-1935. A dissertation, Los Angeles, 2002, էջ 93: Տե՛ս նաև «Fresno Daily Evening Expositor». Driven from Church, 1894, January 19, էջ 1:

5 Mirak R. Torn between two lands: Armenians in America 1890 to World War I, Cambridge (Massachusetts), 1983, էջ 145:

strictive) համաձայագրերի համակարգ, որը նպատակ ուներ Միացյալ Նահանգների տարբեր բաղաձայնություն ստեղծելու զուտ բնակելի թաղամասեր՝ բացառելով որևէ անցանկալի կառույցի, ինչպես, օրինակ՝ գործարանների առկայությունը տվյալ թաղամասում: Եվ որպեսզի օրինական ճանապարհով սահմանափակեն հայերի իրավունքները Ֆրեզնոյում, ամերիկացիները սկսեցին նմանատիպ համաձայնագրեր կիրառել նրանց դեմ: Ըստ դրանց՝ հայերի կամ այլ «անցանկալի» ազգերի (սևամորթ, մեքսիկացի, արևելցի և այլն) բնակությունը, նրանց կողմից անշարժ գույքի վարձակալությունը, օգտագործումը և վաճառքը Ֆրեզնոյի շատ թաղամասերում արգելվում էր⁶:

Օրինակները շատ են: Եթե որևէ բարեկեցիկ թաղամասում հայը տուն էր գնում կամ վարձում, ապա հարևանությամբ գտնվող տները արժեզրկվում էին, իսկ թաղամասը «մատով էին ցույց տալիս»: 1913 թ. «Ասպարէզ»-ում կարդում ենք մի հայի մասին, որը Ֆորթքեմփ (Forthcamp) բարեկարգ փողոցի վրա հող էր գնել ու ցանկանում էր տուն կառուցել իր և ընտանիքի համար: Սակայն շենքի կառուցման ընթացքում, երբ հարևան տեղացիները իմանում են նոր բնակչի ազգությունը, մեծ աղմուկ են բարձրացնում, մինչև անգամ հողը փորելով խցանում են ջրի խողովակները, որպեսզի հայը չկարողանա շարունակել տան կառուցումը: Վերջինս ստիպված հեռանում է այդ փողոցից՝ այլ վայրում հող գնելու և տուն կառուցելու հույսով⁷:

«Կոչնակ»-ի հողվածագիր Ս. Երամյանը մի առիթով պատմում էր, թե ինչպես էր Ֆրեզնոյում տեղական անշարժ գույքի գործակալներից մեկը իր հայտարարություններում հաճախ գրում՝ «Հայերին հող չի վաճառվում»: Հայ ըմբիշ Արամ Հովսեփյանը, բարկացած դիմում է գործակալության գրասենյակին և պահանջում, որ նման հայտարարություններ այլևս չհրատարակի: Վերոհիշյալ Սթաքթընը, սակայն, «դուրս ել, անիծեալ հայ» բառերով վռնդում է հայ ըմբիշին: Արամը ծեծի է ենթարկում գործակալին, բայց հարցի լուծումը լինում է միայն այն, որ երկուսին էլ ձերբակալում են՝ հասարակական կարգը խախտելու համար: Հողվածագիրը նշում է, որ սա միակ դեպքը չէ իր տեսակի մեջ, և որ շատ ուրիշ գործակալություններ ևս հանդես են գալիս հայերի դեմ նման հայտարարություններով⁸: Նույնը շարունակվում է տասը տարի անց: 1923 թ. տեղական «Ֆրեզնո Մորնինգ Րիպաբլիքան» (Fresno Morning Republican) թերթում տպագրած իր հողվածում հայ հեղինակը բողոքում է ամերիկյան առևտրական ընկերությունների դեմ, որոնք հրաժարվում են համալսարան ավարտած հայ բժիշկներին ու փաստաբաններին վարձու գրասենյակներ տրամադրել: Հեղինակի խոսքերով՝ ինքը հաճախ է առիթ ունեցել գրուցելու տեղացիների հետ և հասկացնելու, որ այդօրինակ անպատշաճ վերաբերմունքով չեն կարող շուրջ 20.000 հայությանը դուրս հանել Սան Վոքին հովտից (հովտի հենց կենտրոնում է գտնվում Ֆրեզնոյի շրջանը). «20-30 տարիներ է ի վեր հայը այս հովտին մէջ է հաստատուեր: Հայու քրտինքը թրջեր է Սան Վոգին հովտի»

6 Ավելի մանրամասն տես **Minasian A.** Settlement Geography of Armenians in Fresno. Part II, «The Armenian Review», Autumn, 1972, N 4-100, էջ 58:

7 Տես «Ասպարէզ», Ֆրեզնո, 1913, N 248, էջ 1:

8 Տես «Կոչնակ», Նյու Եորք, 1913, N 48, էջ 1159:

ամայի դաշտերը: Վերջապես հայր կարևոր դեր է խաղցեր այս շրջանի բարգաւաճման և հարստացման մէջ: Ան իր երկրորդ հայրենիքն է դարձուցեր այս շրջանը, և հակառակ ատոր ան կ'ատուի, կ'անպատուուի»⁹:

Ճիշտ է, վերոհիշյալ համաձայնագրերը 1949 թ. ճանաչվեցին հակասահմանադրական¹⁰, սակայն մինչև 1950-ականները Ֆրեզնոյում հայերի իրավունքները տուն գնելու կամ վարձելու հարցում հարաբերական էին:

Ֆրեզնոյի հայության տնտեսական գործունեության գլխավոր ասպարեզը այգեգործությունն էր: Միացյալ Նահանգներում այգեգործական կարևորագույն նշանակություն ունեցող Սան Վոքին հովտում նրանք մեծաքանակ հողատարածքներ էին գնում կամ վարձակալում՝ այգեգործությամբ, հատկապես՝ խաղողագործությամբ զբաղվելու նպատակով և լուրջ հաջողություններ էին գրանցել այդ բնագավառում: Որոշակի պատկերացում կազմելու համար նշենք միայն, որ 1908 թ. նրանց հողատարածքները կազմում էին 25 000 ակր (ակրը հավասար է 4046.86 քառակուսի մետրի), որից շուրջ 20 000-ը միայն խաղողի տնկադաշտեր էին: 1919-ին, երբ Կալիֆոռնիայում խաղողի այգիները զբաղեցնում էին 250 000 ակր, հայերի սեփականությունը կազմում էր դրա ավելի քան 25%-ը՝ 60 000 ակր: Իսկ 1931 թ. Ֆրեզնոյի շրջանի խոշոր խաղողագործների մեկ քառորդը հայեր էին, որոնք տնօրինում էին խաղողի մշակմանը հատկացված հողատարածքների 40%-ը¹¹:

Եվ, իսկապես, հայերի հաջող գործունեության նախապայմանը սեփական հողատարածքների առկայությունն էր. նրանք ի սկզբանե կարևորեցին այդ հանգամանքը: Նրանց զգալի մասը հողատեր էր, այլ ոչ թե հասարակ հողագործ: Օսմանյան կայսրությունում երբեմնի հաջողակ հայ առևտրականներն ու արհեստավորները, Կալիֆոռնիա էին ներգաղթում մեծ գումարներով և գալով Ֆրեզնո՝ իրենց ողջ ունեցվածքը ներդնում էին հողեր գնելու կամ վարձելու և այգեգործությամբ զբաղվելու գործի մեջ՝ սրանով իսկ խիստ տարբերվելով տեղի օտարազգիներից. «Երբ տեղացիներ դեռ կը վարանէին, հայեր չվախցան բարձր գիներ վճարել լաւ այգիներու, այնպէս որ հետզհետէ Ֆրէզնոյի բոլորտիքը ամէնէն լաւ այգիներուն մէկ մեծ մասին տէրը դարձան և չամիչի գործին կարևոր մէկ մասը հայոց ձեռքը անցաւ»¹²:

Հակահայկական տրամադրությունների համընդհանուր մթնոլորտում հայ հողագործների համար հաճախ ստեղծվում էին արհեստական խոչընդոտներ ու դժվարություններ: Ընդ որում՝ հարվածներն ամենից առաջ ուղղվում էին հաջողակ ու ճանաչված գործարարների դեմ: «Սան Ուոքին դաշտին մշակելի հողերուն ահագին մէկ մասը հայոց ձեռքն է,- գրում է «Ասպարեզ»-ի խմբագիր Ա. Կ. Սեքլեմյանը,- ուստի՝ բաղդատաբար կարճ ժամանակամիջոցի մը մէջ, նորեկ, աղքատ գաղթականութեան մը կողմէ այսչափ յառաջադիմութիւն՝ վերջին ծայր զայրոյթ և նախանձ պատճառեց...

9 «Ասպարեզ», Ֆրէզնո, 1923, N 931, էջ 1:

10 Տես Restrictive Covenant, <http://legal-dictionary.thefreedictionary.com/Restrictive+Covenant>

11 Տես **Mirak R.** նշվ. աշխ., էջ 119: «Կոչնակ», Նիւ Եորք, 1919, N 49, էջ 1480: **Minasian Ed.** The Armenian Immigrant Tide: From the Great War to the Great Depression// Recent Studies in Modern Armenian History. NAASR, Cambridge, Mass., 1972, էջ 110:

12 «Ասպարեզ», Ֆրէզնո, 1908, N 5, էջ 1:

Անոնց մրցակիցները իրենք զիրենք անկարող կը գտնեն՝ հաւասար պայմաններու տակ անոնց հետ չափուելու»¹³: Նույն հարցին է անդրադառնում նաև Բոստոնի «Հայրենիք» ամսագիրը. «Իբրև հողագործ հայը այլևս չի մրցում Ամերիկացու հետ, որովհետև արդէն յաղթել է նրան: Այս է պատճառը որ Ամերիկացիները սկսել են ծուռ աչքով նայիլ հայերին»¹⁴:

Այդ ամենի հետ մեկտեղ, տեղացիներին զայրացնում էր այն, որ հայերը համառ էին, հպարտ ու անկախ, ինչը հակասում էր գաղթականի հնագանդ կերպարին: Ֆրեզնոյի մոտ գտնվող Ֆատուեր գյուղաքաղաքի պետական դպրոցում ուսանող տեղացիները այսպես էին արտահայտվում հայ երիտասարդների մասին. «Նրանք միակ օտարագիներն են Ֆատուերում, որոնք կարծում են, թե նույնքան լավն են, որքան և մենք»¹⁵: Ամերիկյան դպրոցներում հայ աշակերտներին հաճախ ծաղրում էին «թուրք» մականունով, անգամ ուսուցիչները, մեղմ ասած, անբարյացակամ վերաբերմունք էին ցուցաբերում նրանց հանդեպ: Պատահում էին դեպքեր, երբ հայ տղաները վեճի էին բռնվում համադասարանցիների հետ: Այդպիսի հայ երիտասարդ էր նաև Վ. Սարոյանը, որն իր ինքնակենսագրական պատմվածքներից մեկում վերհիշում է. «Հայերին ընդունված էր համարել երկրորդ կարգի մարդիկ: Նրանց մշտապես նախատում էին, վիրավորում, արհամարհանքով էին վերաբերվում: Ես այդ հայերից մեկն էի: Այն ժամանակ ես չէի ներում նման վերաբերմունք, չեմ ներում նաև հիմա: Եվ բանն այն չէ, որ հայերը բացառիկ ժողովուրդ են, բնավ ոչ, ես մեր մեջ չեմ տեսել, չեմ տեսնում և ոչ մի բացառիկ բան: Ես մեկն էի նրանցից, որոնց ատում էին և արհամարհում, և դա ինձ հանդգնություն էր հաղորդում: Ես ուզում էի, որ ինձ վիրավորողները լավ իմանան ում հետ գործ ունեն: Այդպես էլ լինում էր»¹⁶:

Արդեն նշվեց, որ ամերիկյան բնիկապաշտության ամենակարևոր դրսևորումները եղան գաղթականների քաղաքացիության հարցը և ներգաղթի սահմանափակման օրենքների ընդունումը: 1870 թ. քաղաքացիության օրենքի համաձայն՝ քաղաքացի դառնալու իրավունք ունեին միայն սպիտակ կամ սևամորթ ցեղի «ազատ մարդիկ»: Իսկ «դեղին» կամ «թուխ սպիտակ» (off-white) ցեղին պատկանողները կամ պետք է հեռանային երկրից, կամ զրկվեին քաղաքացի դառնալու իրավունքից¹⁷: Այդպես, 1882 թ. արգելվեց չինացիների ներգաղթը ԱՄՆ, նմանապես 1907-ին դադարեցվեց ձապոնացիների ներգաղթը: Հայերը նույնպես դասվում էին ոչ սպիտակ ազգերի շարքին, քանի որ, ներգաղթած լինելով Օսմանյան կայսրությունից, նրանք ունեին թուրքական անձնագրեր, որոշ մասը թրքախոս էր և հաճախ շփոթվում էր թուրք մահմեդականների հետ: Այսինքն՝ ինքնըստինքյան նրանք զրկվում էին Միացյալ Նահանգների քաղաքացի լինելու հնարավորությունից:

13 «Ապարիզ», Ֆրեզնո, 1909, N 66, էջ 2:

14 «Հայրենիք» ամսագիր, Պոսթրն, 1924, N 3, էջ 43:

15 Տե՛ս **R. Tracy LaPiere**. The Armenian Colony of Fresno: A Socio-Psychological Study of Prejudice (Unpublished Ph. D. dissertation, Department of Sociology), Stanford University 1930, էջ 346:

16 **Сароян У.** Неудачник, «У. Сароян. Ученик брадобрея», Рассказы, Пер. с англ. **А. Оганяна**, С. Петербург, 2004, էջ 161:

17 Տե՛ս **Մատթեոսեան Վ.**, Ամերիկեան հակագաղթականական հոսանքը և հայերը, նույն տեղում:

Ավելին, 1909 թ. նոյեմբերին քաղաքացիական իրավունքների բյուրոյի տնօրեն Ռիչարդ Քեմբելը ընդունում է որոշում, համաձայն որի՝ թուրքերը, հայերը և սիրիացիները պատկանում են «դեղին» ցեղին և մեծ իմաստով չեն տարբերվում չինացիներից կամ ձապոնացիներից, ուստի քաղաքացիություն ստանալ չեն կարող: Քեմբելը նաև վճռում է, որ հայերը բազմակին են¹⁸: Այս դատավճռից վրդովված՝ նույն ժամանակ «Ասպարէզ»-ը գրում է. «Մենք ալ, իբրև Կովկասեան ցեղին ամէնէն կարևոր ենթաբաժանումը, կրնանք անգլուսաքսոնի մը չափ պարծիլ մեր յառաջադիմութեան և քաղաքակրթութեան ընդունակութիւններով: Ֆրէզնոյի կարևոր եղբայրասիրական ընկերութիւնները՝ հակառակ իրենց դաւանած սահմանադրութեան և ազատական սկզբունքներուն՝ իրենց անուանարկիչ ԹՎՊՈՒՆ դրած են բոլոր հայերուն ձակտին...տարբերութիւն չընէր թէ ո՞ր աստիճանի պատուաւոր ազգային մը ըլլայ, կը բաւէ որ հայ է»¹⁹:

Նման պայմաններում Ֆրեզնոյի հայերը ձգտում էին օր առաջ ձերբազատվել օտարականի կերպարից, և, իհարկե, այս իմաստով առաջնային էր դառնում քաղաքացիություն ստանալը, ինչը օրինական կարգավիճակ ձեռք բերելու խնդրից արդեն վերաձել էր ազգային արժանապատվության հարցի: Ամերիկացիների աչքում հայերին ճիշտ լույսի ներքո ներկայացնելու նպատակով այդ տարիներին Ֆրեզնոյի հայ պարբերական մամուլում և տեղի ամերիկյան որոշ հեղինակավոր շաբաթաթերթերում (հատկապես՝ «Fresno Morning Republican», «Fresno Daily Evening Expositor») սկսում են հայտնվել տարբեր հոդվածներ, որոնցում լուսաբանվում է հայերի՝ իբրև հնդեվրոպական հնագույն ժողովրդի ծագումնաբանությունը, նրանց քաղաքակրթության պատմությունը: Քննարկվում է այն հարցը, որ վերջինները արագորեն հարմարվում են ամերիկյան հասարակությանը, այսինքն՝ «ամերիկացվում» են (americanized), և, արդարև, կարող են լինել Միացյալ Նահանգների արժանավոր ու օրինավոր քաղաքացիներ:

Նույն 1909 թ. դեկտեմբերին Մասաչուսեթսի նահանգային դատարանում քննվում է բոստոնցի չորս հայերի՝ Հալաջյան, Էքմեքջյան, Մուրադյան, Պայենց, քաղաքացիություն ստանալու հարցը: Դատավարության արդյունքում դատավոր Ֆրենսիս Լոուելը բավարարում է նրանց հայցը՝ ձանաչելով բոլոր հայերին սպիտակ կամ կովկասյան ցեղ: Այդուհանդերձ սրանով հարցը չի փակվում, մանավանդ Միացյալ Նահանգների արևմուտքում՝ Ֆրեզնոյում: Թեև արդեն գոյություն ունեւ հայության ցեղային պատկանելիությունը հստակեցրած օրինական դատավճիռ, այնուամենայնիվ ամերիկյան քաղաքացի դառնալը դեռևս մնում էր դժվարին գործընթաց: Իսկ Ֆրեզնոյում շարունակում էին ընդունվել հողային սահմանափակման հերթական օրինազօծեր, որոնք որպես կանոն կապված էին գաղթականների օրինական կարգավիճակի խնդրի հետ: Օրինակ՝ վերոհիշյալ դատավարությունից ընդամենը մեկ ամիս անց Ֆրեզնոյում երևան է գալիս «Օտարազգիների համար հողային օրինագիծ» («Alien Land Bill»)՝ համաձայն որի հողի սեփականության իրավունք ձեռք բերելու համար օտարազգիները պետք է հինգ տարվա ընթացքում դառնային Միացյալ Նահանգների քաղաքացի, հակառակ դեպ-

18 Տե՛ս «Ասպարէզ», Ֆրեզնո, 1909, N 66, էջ 2:

19 «Ասպարէզ», Ֆրեզնո, 1909, N 35, էջ 1:

քում՝ նրանք պարտավորվում էին անմիջապես վաճառել իրենց ունեցվածքը ԱՄՆ-ի քաղաքացի հանդիսացող որևէ անհատի²⁰: Դժվար չէ պատկերացնել, թե այդ օրինագիծը ինչ մեծ անհանգստություն ու վրդովմունք առաջացրեց տեղի հայության շրջանում, որի տրամադրության տակ գտնվող ընդարձակ հողատարածքների մասին արդեն խոսել ենք: Բարեբախտաբար, օրինագիծը մերժվում է, ինչը մեծ ցնծություն էր հայերի համար:

Տարիներ անց՝ 1925 թ., Փորթլենդում (Օրեգոն) կայացած Թադոս Քարթոյանի դատավարությանը (1923-1925) վերջին անգամ քննվում է հայերի ցեղային պատկանելիության և հետևաբար՝ քաղաքացիության իրավունքի խնդիրը: Կարևոր է նշել, որ դատավարությանը ներկա էին «Արտասահմանյան առաքելությունների հանձնակատարների ամերիկյան վարչություն» (American Board of Commissioners for Foreign Missions) միսիոներական ընկերության ներկայացուցիչներ, որոնց վկայությունները այն մասին, թե հայերը ոչ միայն իրենց հայրենիքում, այլ նաև եվրոպացիների կողմից գուտ սպիտակ ցեղ են համարվում, մեծ տպավորություն էին գործել դատարանի վրա²¹: Բացի այդ՝ դատավարությանը մասնակցում էր նաև փաստաբան Վարդան Մալքունը՝ հայտնի որպես «Հայերն Ամերիկայում» (The Armenians in America, Boston, Chicago, 1919) գրքի հեղինակ, որի՝ դատարանին տրամադրած ուսումնասիրությունները հայ ժողովրդի եվրոպական ծագման, նրա հնագույն մշակույթի մասին, ինչպես նաև մասնագիտական հետազոտություններն ու ամերիկահայության թվի, սոցիալական կարգավիճակի և այլ հարցերի վերաբերյալ վիճակագրությունները, որոնք փաստում էին այն մասին, թե հայը իսկապես ընդունակ է ամերիկացման, լուրջ դերակատարություն ունեցան ցանկալի արդյունքի հասնելու գործում²²:

Դատավարությունն ավարտվում է ի նպաստ հայերի: ԱՄՆ-ի դաշնային վճռաբեկ դատարանի կողմից հայերը կրկին ճանաչվում են «սպիտակ» ցեղ: 1926 թ. Միացյալ Նահանգների ընդհանուր դատախազ Սարջընթը հայտարարում է. «Օրէնքի ներկայ վիճակին մէջ պատճառ չկայ կասկածելու Միացեալ Նահանգներու մէջ հայերու քաղաքացիութեան թեկնածութեան իրաւունքի մասին»²³:

Այսպիսով, Միացյալ Նահանգներում պաշտոնապես փակվեցին հայերի ցեղային պատկանելիության և քաղաքացիության իրավունքի վերաբերյալ հարցերը: Սակայն գործնականում հայերի՝ ամերիկացիների հետ իրավահավասար լինելու հանգամանքը դեռ երկար տարիներ (մինչև 1950-ական թթ.) անտեսվելու էր Ֆրեզնոյում: Ամերիկյան առևտրային կազմակերպությունները, անշարժ գույքի գործակալությունները, ուսումնական և այլ հաստատությունները շարունակում էին խոչընդոտներ ստեղծել տեղի հայության համար: Հ. Թերջիմանյանի մի հոդվածում շատ պատկերավոր

20 Այս մասին տես **Mirak R.** նշվ. աշխ., էջ 282-283:

21 Ինչպես հայտնի է, ամերիկյան միսիոներները Օսմանյան կայսրության տարածքում ավետարանչական գործունեություն էին ծավալել դեռևս 1930-ական թվականներից սկսած:

22 Դատավարության ողջ ընթացքի պաշտոնական արձանագրությունները տես «Հայ քաղաքացիական փորձադատը Միացեալ Նահանգաց Շրջանային Դատարանին մէջ. պաշտօնական ատենագրութիւն», Նիւ Եորք, 1925, թարգ.՝ **S. Ա. Տիքիճեան**, էջ 5:

23 «Ասպարէզ», Ֆրէզնօ, 1926, N 1180, էջ 2: Տես նաև «Նոր օր», Ֆրէզնօ, 1925, N 60, էջ 1:

օրինակով ներկայացվում է այդ տարիներին ամերիկացիների հակահայկական տրամադրությունը. «1920–30-ական թվականներին մեծ դժվարություն էր Ֆրեզնոյի պետական համալսարանն ավարտած, բայց ազգությամբ հայ որևէ աղջկա տեղավորել ուսուցչի պաշտոնում: Գարոցի խորհուրդը առավել կնախընտրեր սկանդինավյան ազգանունով և ցածրակավորումով մեկին, քան հայի»²⁴:

Ամփոփելով նշենք, որ հակագաղթականական շարժումը՝ բնիկապատությունը, Միացյալ Նահանգներում ուղեկցվում էր նաև գաղթականների ներգաղթը սահմանափակող օրենքների ընդունումով, որոնցից ամենագլխավորը՝ «Ազգային ակունքների օրենքը» (National Origins Act, հայտնի է նաև The Immigration Act of 1924 կամ The Johnson–Reed Act անվանումներով), վավերացվեց 1924 թ. մայիսի 26-ին՝ ամերիկահայերի քաղաքացիության խնդրի լուծմանը գրեթե զուգահեռ: Համաձայն «Ազգային ակունքների օրենքի»՝ գաղթականների թվաքանակը չէր կարող գերազանցել ԱՄՆ-ի բնակիչների նույն ազգության երկու տոկոսը՝ ըստ 1890 թ. մարդահամարի (1929-ից՝ ըստ 1920 թ. մարդահամարի): Նախապատվություն էր տրվում հատկապես հյուսիս-արևմտյան Եվրոպայի երկրներից ներգաղթել ցանկացողներին, և գրեթե բացառվում էր ներգաղթը Աֆրիկայի ու Ասիայի երկրներից, այդ թվում՝ նաև հայերի համար²⁵: Օրենքը գործեց մինչև 1965 թ.՝ էապես կրճատելով հայության ներգաղթը Ամերիկայի Միացյալ Նահանգներ:

Այնուամենայնիվ, չնայած բոլոր տեսակի խոչընդոտներին, ազգային ու քաղաքական, սոցիալական ու տնտեսական արգելքներին, Ֆրեզնոյի հայ բնակչությունը իր համառ աշխատասիրությամբ ու բանիմացությամբ կարողացավ հարմարվել նոր երկրի պայմաններին և շատ ոլորտներում մեծ հաջողությունների հասավ՝ դրանով իսկ նյութական հիմք ստեղծելով համայնքային կազմակերպված կյանքի համար ու մեծապես նպաստելով հյուրընկալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Համսիկ Մ. Եսայան – զբաղվում է ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի հայ համայնքների ձևավորման և զարգացման (1880–1930-ական թթ.) պատմության ուսումնասիրությամբ: Հետազոտում է նաև Կալիֆոռնիայի հայ պարբերական մամուլի պատմությունը:

24 Terjmanian H. Armenians in Fresno, «Hye Sharzhoom», September, 1981, N 4, էջ 8:

25 ԱՄՆ-ի՝ այդ տարիների ներգաղթի քաղաքականության մասին տես Frank J. C., Salvatore J. L. The Peripheral Americans, Malabar, Florida, 1984, էջ 217–223:

Summary

THE LEGAL STATUS OF ARMENIANS IN FRESNO COUNTY (1880–1920)

Hasmik M. Yesayan

Key words – discrimination, nativism, restrictive covenants, immigration policy, natives, “undesirables”, racial classification, citizenship.

This article makes an attempt to investigate the legal status of the Armenians settled in Fresno, California in the 1880–1920s in the context of national policies of the United States. The Nativism, an Anglo–Saxon influential movement, formed in 19th century was aimed at maintaining racial purity, and the United States government adopted a variety of different laws for that purpose. The most essential of these laws was the law on refugee citizenship, which was accompanied by discussions about the ethnic origins and the refugees deprived of the rights came across serious obstacles in all of the legal and social fields and the immigration restricting laws of 1921–1924s, which resulted in significant reduction of the Armenian immigration to the United States, including California, Fresno.

The article discusses the origin and the reasons of the national discrimination against the Armenians in Fresno County, caused by nativism, as well as the inter–ethnic relations between the Armenians and the natives. It reveals the restrictive covenants, which were aimed at «undesirables», including Armenians. These laws created complications and obstacles for the Armenians in their new homeland, Fresno.

Резюме

ПРАВОВОЙ СТАТУС АРМЯН В ОКРУГЕ ФРЕСНО (1880–1920 гг)

Асмик М. Есяян

Ключевые слова – дискриминация, нативизм, ограничительные соглашения, иммиграционная политика, коренные, “нежелательные” иммигранты, этническая принадлежность, гражданство.

В данной статье исследуется вопрос о правовом статусе армян в округе Фресно, штат Калифорния в 1880–1920гг. в контексте национальной политики

Соединенных Штатов. Нативизм, влиятельное англо-саксонское движение, образовавшееся в конце 19-го века, было направлено на поддержание этнической чистоты, с целью сохранения которой правительство США в разные времена принимало некоторые законы. Самый существенный из этих законов относился к вопросу о получении иммигрантами гражданства, который сопровождался обсуждениями этнической принадлежности, причем иммигранты которым было отказано в получении гражданства, сталкивались с серьезными препятствиями и трудностями во всех правовых и социальных сферах, а также законы, принятые в 1921-1924 гг., ограничивающие иммиграцию, вследствие чего существенно сократилось число армянских иммигрантов в США, в том числе в Калифорнии, Фресно.

В статье обсуждаются проявления национальной дискриминации на почве нативизма по отношению к армянам в округе Фресно, их причины и межнациональные трения армян с местным населением. Представлены ограничительные соглашения штата Калифорния, направленные против “нежелательных” иммигрантов, в том числе армян. Рассмотрены возникшие после принятия вышеперечисленных законов трудности и препятствия для армян на их новой земле, в Фресно.